

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի

Գիտական խորհրդի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04.07.2017թ. /արձ.Ն 17 /

Լսելով և քննարկելով «Մագիստրատուրայում ուսումնական գործընթացի կազմակերպման և մագիստրոսական թեզերի որակի բարձրացման խնդիրները և բարելավման ուղիները» հարցը / զեկ. դոցենտ Մ. Դանիելյան/, գիտական խորհուրդը նշում է, որ մագիստրական ուսուցումը իրավամբ դարձել է հետխորհրդային բուհական ուսուցման կարևոր բաղադրիչներից մեկը:

ՀԱԱՀ մագիստրատուրա 1999-2017 թթ. տվել է 2240 շրջանավարտ, որոնցից 1640-ը /73 %/ գերազանցության դիպլոմով: Համաձայն աշխատանքի տեղավորման կենտրոնի տեղեկատվության, շրջանավարտների 85-90 տոկոսը տեղավորվել են աշխատանքի և իրենց գործունեությունը հաջողությամբ իրականացնում են գիտամանկավարժական, գիտահետազոտական, ինչպես նաև տնտեսության տարբեր բնագավառներում:

Ներկայումս մագիստրատուրայում կրթությունն իրականացվում է 7 մասնագիտական որակավորումների 36 մասնագիտություններով՝ ցերեկային և հեռակա ուսուցման ձևերով: Բոլոր մասնագիտությունների համար կազմված և պատշաճ հաստատված են կրեդիտային համակարգի նորմերին համապատասխանող ուսումնական պլաններ և դասավանդվող առարկաների առարկայական ծրագրեր:

ՀԱԱՀ մագիստրատուրայում դասավանդում են 155 դասախոսներ, որոնցից 95-ը գիտությունների թեկնածուներ, 37-ը գիտությունների դոկտորներ:

Մագիստրոսական ուսուցման իրականացման գործում դեռևս կան մի շարք բացթողումներ՝ մագիստրոսական ատենախոսությունների թեմատիկայի, ուսումնասիրության օբյեկտների ընտրության, գիտական ղեկավարների նշանակման, դասերին մագիստրանտների մասնակցության ապահովման, արտադրական պրակտիկայի նպատակային ղեկավարման, պահանջները բավարարող ատենախոսությունների պատրաստման և պաշտպանության կազմակերպման գործում:

Ելնելով վերոհիշյալից գիտական խորհուրդը որոշում է:

1. Հանձնարարել ուսումնա-մեթոդական կենտրոնի տնօրեն - պրոռեկտոր Ս.Դավեյանին

1.1. Ուժեղացնել վերահսկողությունը մագիստրատուրայում ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման նկատմամբ: